

իրեն արժեք թարմ հոտը հալին, ու զսպուած ոսկորի կրծել մը: Միտքը թափանցաւ այդ մեկուսացման շուրջ ու զգուեցաւ: Ձեռքը ինքն իրեն վար ինկաւ քոնելիքէն. մտաւ գրպանը:

Կծծի իւր սարօքն: Մըմնջեց փսոսանքով: Յետոյ ամուր զարկաւ կրունկները աստիճաններէն վար: Ան զգուանէն պիտի թֆնէր ալ, եթէ չտեսներ մեզ: Կլից հաւաքածը առնելու համար մեր բարեւը:

- Պրն. Տնօրէնը Ձեզ կ'ուզէ:

- Ըսէ՛ք Պրն. Արուեսանին ալ:

Ուսերուն վրայէն կը ժպտէր մեզի: Տեսած էր մեզ կօշկակարին մօտ, լսած մեր խօսքերը:

- Քիչ մը սպասեցէ՛ք տղաք, հաւը թող մարսէ:

Մեր ուժէն վեր հեգնութիւն մը կար այդ մարդուն լեզուին մէջ: Թափփած, թուրքերան այդ հսկան չէինք սիրեր, բայց կը փնտէինք իր սրախօսութիւնները, ընդհանրապէս ուռուցիկ, գովասանք իրեն կամ զանազաններու, երբեմն ալ անզգուշ, նոյն իսկ դիտումնաւոր ֆողագերծումներ իր պաշտօնակիցներուն գործունէութենէն: Դիտմամբ, կ'արագացնէինք մեր քայլերը ու կը ժպտինք իրարու:

Առաջին հարուածին իսկ դուռը բաց է, ու ինք պատրաստ. սովորական դաժան ու անկնդեղ դէմքը: Իսկ պնակը չկայ:

Ա. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

## ԵՐԳԻԾԱԿԱՆԸ ԵՒ ՈՂԲԵՐԳԱԿԱՆԸ ԵՐՈՒԱՆԴՈՍԵԱՆԻ «ԸՆԿԵՐ Բ. ՓԱՆՋՈՒՆԻ» ՎԷՊՈՒՄ

Իր ստեղծումից շուրջ ութ տասնամեակ յետոյ, ունենալով արտասահմանեան բազմաթիւ հրատարակութիւններ, 1989 թուին Նրեւանում վերջապէս լոյս տեսաւ Նրուանդ Օտեանի «Ընկեր Բ. Փանջունի» վէպը՝ հայ քաղաքական երգիծանքի գլուխգործոցը: Մինչ այդ՝ երգիծանքի արգիլուած էր Խորհրդային Նրկրում, ընթերցող լայն շրջաններին՝ անմատչելի: Սակաւ բացառութիւնները միայն կարող էին ըմբռնել այդ վէպը, այն էլ թափուն, առանց բարձրաձայն մտորելու յանդգնութեան . . . : Վէպի արտասահմանեան հրատարակութիւնների օրինակները պահուում էին գրադարանների յատուկ բաժիններում, իսկ իրենց ունեցած հատուկ կենտ օրինակները մարդիկ սրբազան մասունքի պէս երկիւղածօրէն փոխանցում էին միայն ամենավստահելի մտերիմներին . . . :

Իսկ ինչո՞ւ էր արգելուած Խորհրդային Կարգերից շուրջ մէկ տասնամեակ առաջ ստեղծուած երկը: Այս հարցին միանշանակ ու սպառիչ պատասխան տալն առայժմ դժուար է, սակայն կարելի է վստահ ասել, որ գլխաւոր պատճառներից մէկը այն նեղմիտ, գեղարուեստական երկը միմիայն ճշմոտութեան գաղափարների դիտանկիւնից գնահատելու կաղապարային չափանիշներով առաջնորդուող պաշտօնական քննադատութիւնն էր, որը թեւէ չէր էլ ուրանում «Ընկ. Բ. Փանջունու» գեղարուեստական ուժն ու արժանիքները, նոյնիսկ գովեստներ էլ չէր խնայում, բայց համարում էր Խորհրդային երկրում ընթերցանութեան համար ոչ յանճարարելի՝ «ինչպէ՛ս կարելի է» սկզբունքով: Ուրեմն տարօրինակ պիտի չհամարել, որ Օտեանի երկերի ժողովածուները մեզանում տպւում էին առանց այդ վէպի, առանձին հրատար-

րակութիւնն էլ բացառուած էր, բայց Օտեանին վերաբերող գրականագիտական աշխատութիւններում չէին արգելում այն վերլուծել ու թոյլատրելի սահմաններում եւ ընդունելի չափանիշներով գնահատել: Իրրեւ օրինակ կարող ենք յիշել Անուշաւան Մակարեանի, Սարիբէկ Մանուկեանի՝ Օտեանին նուիրուած աշխատութիւնները, որոնց մէջ վէպի գլխաւոր հերոսը գնահատուել է միմիայն որպէս դաշնակցական գործիչ, որն, իբր, գոեհկացնում է մարքսիզմը, սոցիալիզմի կամ ընկերվարական գաղափարախօսութիւնները: Խճչ է ստացում: Կերպարի այսպիսի միակողմանի, ոչ գիտական մեկնաբանութիւն կարելի էր, իսկ բուն գեղարուեստական երկը ընթերցողի ձեռք տալ՝ չէր կարելի, որովհետեւ այն վտանգը կար, թէ ընթերցողը կը հասկնար վէպի իրական բովանդակութիւնը եւ ենթատեքստը, կը ճանաչէր իրական ու մերօրեայ փանջունիներին, որոնք լիքն էին եւ են իր շուրջը:

Ինչեւէ: Վէպն այժմ վերահրատարակուել է տաղանդաւոր Ալ. Սարոյանի ծաղրանկարներով, Լեւոն Հախվերդեանի առաջաբանով. դրանից մի քանի տարի է անցել, ու արտակարգ ոչինչ չի եղել: Յամենայն դէպս, Հայաստանում կոմունիստական վարչակարգի պարտութիւնը, հասարակական-քաղաքական կեանքի բուն տեղաշարժերը չի կարելի ուղղակիօրէն կապել այդ վէպի հրատարակութեան հետ: Սակայն դա չի նշանակում, թէ «Ընկ. Բ. Փանջունին» հնացել է կամ դոյզն-ինչ նուազել է նրա նախնական գրաչութիւնը: Ընդհակառակն, արուեստի բոլոր մեծ երկերի նման, նա այժմէական է, աւելին՝ քաղաքական այն սուր երգիծանքը, որ բարձր արուեստով Օտեանը կիրառել է բախտախնդիրների, կուսակցամուկների, հանկատարների, ժողովրդի խտէլների անունից ճառող,

բայն նրան միայն աղէտներ բերող քաղաքական դեմագոգների նկատմամբ, այսօր ձեռք է բերել առաւել սուր հնչեղութիւն եւ ճանաչողական նշանակութիւն: Այն տպաւորութիւնն է ստեղծում, թէ 1909 թ. ծնունդ առած այդ գործը գրուել է այսօրուայ համար, եւ նրանում ներկայացում ու բնութագրում են . . . ամենօրեայ երեւոյթներ ու գործիչներ:

Յայտնի է, որ Օտեանն ինքը առանձնապէս գոհ չէր իր վէպերից, նոյնիսկ դրանք անուանում էր «փիհներ»՝ ապօրէն զաւակներ: Սակայն նրանց մէջ առաւել յաջողուած էր համարում «Յեղափոխութեան մակարոյծները» (ինքն այդ երկը եօթ պատմութեանց կազմում վիպակ էր համարում) եւ «Ընկեր Փանջունին»: «Գիծեր երուանդ Օտեանի կեանքին» յուշագրութեան մէջ Յակոբ Սիրունին բերում է Օտեանի՝ ինքնադատաստանի նմանուող խոստովանութիւնը. «Անշուշտ պէտք է յիշել նաեւ Փանջունին նուիրուած գոյգ հատորներս (այդ ժամանակ դեռեւս գրուած չի եղել վէպի երրորդ մասը - Ս. Մ.), «Առաքելութիւն մը ի Մալլվար» եւ «Ընկեր Փանջունի Վասպուրականին մէջ» որոնք նախ «Բիւզանդիոնի» մէջ լոյս տեսան: Անոնք ալ կեանքէ քաղուած են, մանաւանդ առաջին հատորը: Ու ատկէ թերեւս անոնց գտած յաջողութիւնը: Երբ առաջին անգամ այն լոյս ընծայեցի «Բիւզանդիոնի» մէջ՝ շատեր կարծեցին, թէ Փանջունիի տիպարն ալ իրական դէմք մըն է: Նոյնիսկ երկու վանեցիներ գրաւ էին բռներ Փանջունիին իրական թէ երեւակայական տիպար մը ըլլալու մասին, եւ նոյնիսկ դրամ դրեր են ազգային հաստատութեան մը տրուելու համար: Անշուշտ երկրորդը շահեցաւ գրաւը, որովհետեւ իրական դէմք մը չէ Փանջունին, այլ տեսակ մը ընդհանուր տիպար է, խտացումը յեղափոխական

տիպերուն: Նոր էր հատորով լոյս տեսնել առաջին գիրքը, երբ օր մը Զաւարեան կամուրջին վրայ բռնեց զիս. «Եթէ հարուստ ըլլայի – ըսաւ – այս գիրքէն հազարաւոր օրինակ կը գնէի ու կը բաժանէի մեր բոլոր ընկերներուն»: Արդարեւ շատ ժողովրդականութիւն գտաւ այս գործս. ամէն մարդ ինքզինքը կը տեսնէր հոն կամ իր բարեկամը, կամ իր դրացին: Արամին համար ալ կը պատմեն, որ մինչեւ մեռած օրը գրպանին մէջ ունէր Փանջունիի այս նամակները, ու յաճախակի կը կարդար»<sup>(1)</sup> (ընդգծ. իմն եմ – Ս. Մ.):

Նկատի ունենա՞մ, որ վկայութիւններ էլ կան այն մասին, թէ «Ընկեր Փանջունին» բարձր է գնահատուել «Երեւանի ֆոմիսերներու կողմէ»: Սա Յովհ. Թումանեանն է հաղորդել Օտեանին՝ Պոլսում եղած ժամանակ:

Ինչպէս երեւում է վերոբերեալից, Օտեանն ինքը Փանջունու կուսակցական պատկանելութեան մասին որոշակի ոչինչ չի ասում: Ծագում է միանգամայն քնական հարց՝ ի՞նչն է պատճառը, որ Օտեանի վէպը բարձր են գնահատել եւ դաշնակցական, եւ պօլշեիկեան դեկլարները: Միայն այն, որ պօլշեիկները Փանջունու կերպարում տեսնում էին դաշնակցականի՞ն, թէ՞ նաեւ այն, որ դաշնակցականներն էլ տեսել են պօլշեիկին: Ահա այս առումով էլ իր հետաքրքրութիւնը պահպանում է շարունակուող այն բանավէճը, թէ՛ ո՞վ է Փանջունին, դաշնակցական է արդեօք, թէ՛ պօլշեիկ, հնչակեան է, թէ՛ ռամկավար:

Օտեանի երկի խորհրդային ուսումնասիրողները հասկնալի պատճառով ճիգ ու ջանք չեն խնայել Փանջունուն հռչակելու անվերապահ դաշնակցական եւ նրան ամէն կերպ հեռու պահելու պօլշե-

իզմից ու կոմունիստներից: Նրանք չեն էլ հորշել վէպի փաստերի միտումնաւոր մեկնաբանութիւններից, նաեւ փաստերի՝ յօգուտ իրենց արհեստական տեսութեան կեղծումից: Երեւի մտածել են, որ վատ արարքների, հակաժողովրդական գործողութիւնների ընդունակ են միմիայն իրենց գաղափարական հակառակորդները եւ աշխատել են Օտեանին էլ փրկել գաղափարական սխալներից:

Զի կարելի անտեսել մի իրողութիւն. Օտեանը ոչ մի ֆաղափական կուսակցութեան էլ չի պատկանել եւ, եթէ ֆնմադատել է այս կամ այն կուսակցութեանը, ապա ոչ թէ մէկին գերադասելու եւ միւսին ստորադասելու, այլ կենսական ճշմարտութիւնը բացայայտելու եւ ժողովրդի իրական շահերը ներկայացնելու նկատառումով: Այս խնդրում նրան, իբրեւ ճշմարիտ արուեստագետի, չեն կաշկանդել նոյնիսկ իր ժամանակաւոր համակրանքները: Երգիծանքի իր գէնքը նա գործադրել է անաչառ անկողմնակալութեամբ՝ չխնայելով ո՛չ դաշնակցականներին, ո՛չ էլ իր համակրած հնչակեաններին կամ պօլշեիկներին, որովհետեւ նրա գլխաւոր չափանիշը աղետներից աչք չբացող ժողովրդի քիւրաւոր վերբերին դարձան անելուն նպատակամղուած՝ հայութեան առողջ ուժերի համերաշխ եւ խելամիտ գործունէութիւնն էր: Իսկ Փանջունիներ կային ֆաղափական բոլոր կուսակցութիւններում: Եւ եթէ Օտեանը փանջունուն ներկայացնէր միայն այս կամ միայն այն ֆաղափական կուսակցութեան անդամ, նրա կերպարը կը լինէր միակողմանի, ինչպէս ներկայացրել են մինչեւ այժմ, եւ երբեք էլ չէր դառնայ Փանջունիութեան երեւոյթի խտացուած, ընդհանրացուած պատկերը:

1. «Բագին», Պէյրութ, 1969, նո. 11-12, էջ 144-145:

Զի կարելի անտեսել նաև պատկերի կոնկրետության խնդիրը: Զե՞ որ, հեղինակի իսկ վկայությամբ, այնքան իրական էր Փանջունին, որ նրա կերպարում ժամանակակից յեղափոխականները տեսնում էին կա՛մ իրենց, կա՛մ իրենց ծանօթներին, կա՛մ հակառակորդներին: Եւ դարձեալ կուսակցական պատկանելութիւնը որեւէ դեր չունէր: Այո՛, Փանջունին եղբ՛լ է դաշնակցական գործիչ, եւ այս հարցում մենք վէն չունենք Ա. Մակարեանի, Լ. Հախվերդեանի եւ Ս. Մանուկեանի հետ: Բայց նրանք նոյնքան միակողմանի են ներկայացրել Փանջունուն, որքան նրանք, ովքեր Փանջունուն ներկայացրել են միմիայն որպէս պոլշեիկ: Խորհրդային շրջանի ուսումնասիրողներից ոչ ոք չի կարողացել տեսնել հնչակ, ռամկավար կամ պոլշեիկ Փանջունուն, չի ջանացել նկատել եւ վերլուծել այդ կերպարն իր զարգացման ընթացքին մէջ, չի գնազանել «հին» ու «նոր» փանջունիներին, որոնց յստակօրէն տարբերակել է հեղինակը, եւ հաշուի չեն առել կենսական հանգամանքներին եւ իրադարձութիւններին համապատասխան նրա փոփոխութիւնները: Իսկ Ս. Մանուկեանը պոլշեիկ Փանջունու արարքներն էլ վերագրել է դաշնակցական Փանջունուն եւ ստեղծել կատարեալ խառնաշփոթ:

«Ընկեր Փանջունին տարագրութեան մէջ» հատորի սկզբնամասում Օտեանն իր վերափոխուած հերոսին՝ «նոր Փանջունուն» քերում է Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երեւան, ուր նա մեծ եռանդով շարունակում է «փրոպագանդի» գործը: Կարո՞ղ էր նա պոլշեիկեան Հայաստանում դաշնակցական պրոպագանդա անել: Նրա, իբրեւ յեղափոխական

գործչի, հեղինակութիւնն ու հոչակը արդէն տարածուել էր տեսէ՛՛ք ուր՝ «Պարսից ծոցէն մինչեւ Մոսկուա եւ Էնկյուրիէն մինչեւ Աֆղանիստանի սահմանները» (2): Եթէ Փանջունին միայն դաշնակցական լինէր, կարո՞ղ էր նրա հոչակը տարածուել խորհրդային ողջ երկրում, Թուրքիայում եւ Աֆղանիստանում:

Իր պատասխան-նամակը, որ Փանջունին յղել էր Օտեանին Երեւանից եւ որով արտօնել էլ նրան պատմելու տարագրութեան շրջանի իր գործունէութիւնը, գրուած էր նոր ուղղագրութեամբ, այսինքն՝ 1922 թուից ոչ առաջ, գրուած էր նոր ոճով ու մտածողութեամբ, այնպէս որ՝ մի քանի մասնագէտներ երեք օր ու գիշեր չարչարելով մի կերպ «թարգմանել» էին նրա բովանդակութիւնը: Հեղինակը, խնայելով ընթերցողին, բուն նամակը ամբողջութեամբ չի ներկայացնում՝ նրան «ուղեղային տագնապի մը չ'ենթարկելու համար»:

Մի հարց էլ կարող է ծագել. դաշնակցական Փանջունին ինչո՞ւ պիտի գրէր պոլշեիկեան ուղղագրութեամբ ու քառամբերով:

Պատասխան-նամակի սկզբում Փանջունին Օտեանին որակում է որպէս «կեղտոտ բուրժուաների, կապիտալիստների հացկատակ, պնակալէզ եւ այլն» (206): Ո՞ւմ յայտնի չէ, թէ այն ժամանակներում այդպիսի որակումներ ո՛վ ո՛ւմ էր տալիս:

Փանջունին գտել էր գործելու նոր միջավայր ու ասպարէզ: Նա ակնթարթօրէն վերակառուցուել էր նոր պայմաններին ու պահանջներին համապատասխան, դարձել էր նոր չարիք՝ հասարակական ահաւոր վտանգաւորութեամբ:

2. Եր. Օտեան, Ընկեր Փանջունի, Երեւան, 1989, էջ 206: Սոյն հրատարակութիւնից՝ քաղուածքները այսուհետեւ շարադրանքում:

«Հին» ու «նոր» փանջունիների տարբերակումը կը դառնար այդ կերպարի էութիւնը բացայայտելու լաւագոյն հմարաւորութիւններից մէկը, որը, ցաւօք, չեն օգտագործել նախորդ ուսումնասիրողները: Իր երկու տարբեր որակների մասին Փանջունին խօսում է միանգամայն որոշակի. «Յետոյ կը գուժէ մահը հին Փանջունիին. «նա մեռած է, նեխած դիակ է (կը գրէ), իրրեւ գիշատիչ ագռաւ կամ անգղ կրնաս գայն ծամել, ծամծմել ու կուլ տալ, կրնաս այդ դիակը շահագործել ինչպէս ուզես, ծաղրիր, հեզմիր քո կարողութեան չափով, ես այդ մասին շնորհակալ կը լինեմ քեզ: Իսկ գալով նոր Փանջունիին՝ նա շատ հեռացած է հեզմանքի, ծաղրանքի, երգիծանքի սահմաններէն. նա այլեւս անբռնաբարելի, անխոցելի է, նա սոսկալի է, սարսափելի է, բայց ոչ ծաղրելի: Նրան կարող ես ատել, կարող ես նրանից վախենալ, բայց ոչ հեզմել» (206, ընդգծ. իմն եմ - Ս. Մ.): Այո՛, արմատապէս փոխուել է Փանջունին, դարձել նոր աղէտ ու պատուհաս՝ անցեալից պահպանելով միայն իր հին կորովն ու պերճախօսութիւնը՝ «միակ հնութիւնը, որ իր մէջ անեղծ մնացած է»:

Եթէ Ա. Մակարեանը բերել է փաստեր, հիմնաւորել Փանջունու դաշնակցական լինելը՝ այդ կուսակցութեան գործունէութեանը անմպաստ գնահատականներ ու որակումներ շոյալելու համար՝ Վանի դաշնակցական կազմակերպութեան մէջ փնտռելով նրա նախատիպերին (3), անգամ նրա գործակիցների ու վէպի երկրորդական դէմքերի համար իրական հիմքեր որոնել, մոռանալով, որ ԽԵ Աւօն, օրինակ, Վասպուրականում լինել չէր կարող, քանի որ արդէն «առիւծի պէս» ընկել էր Ծապլվարում՝ քոմարաշցի քրդերի յար-

ձակման ժամանակ, ապա այլ կերպ է վարուել Ս. Մանուկեանը: Նա, այն էլ ոչ հեռու 1979 թուին, պարզապէս չի կամեցել, որ Փանջունին որեւէ առնչութիւն ունենայ պօլշեւիզմի հետ, խորհրդային իրականութեան հետ: Ուստի նպատակադրմար է գտել Օտեանի հերոսին հեռացնել Խորհրդային Հայաստանից եւ տեղափոխել 1918 թ. ստեղծուած Հայաստանի Հանրապետութիւն: «Փանջունին - գրել է նա - 1918ին ազատում է աքաղից եւ մեկնում Երեւան՝ դաշնակցական «հանրապետութեան» (չակերտները իրենն են - Ս. Մ.) մէջ ստանձնելով փրոպագանդի գործաւորի» պաշտօնը: (4)

Վերելում տեսնւմ, որ Փանջունին իր պատասխան-նամակը գրել է արեղեանական ուղղագրութեամբ, որն ընդունուել է 1922 թ., այսինքն այն ժամանակ, երբ Երեւանում արդէն խորհրդային կարգեր էին: Որ Ս. Մանուկեանը իսկապէս պօլշեւիկ Փանջունու արարքները վերագրել է դաշնակցական Փանջունուն, երելում է նամակի այն հատուածից, որ նպատակային յապաւումներով մէջ է բերել նա՛ դարձեալ «ապացուցանելու» համար, որ Փանջունին դաշնակցական է: Հիմա տեսնենք քաղուածքն առանց սղումների, եւ պատկերը պարզ կը դառնայ: «Իմ ժամերը սուղ են - գրում է Փանջունին Օտեանին - չեմ կարող աւելի երկար գրել, որովհետեւ լծուած եմ մի փրկարար աշխատանքի. ես պէտք է քանդեմ հնութիւնը, հին լեզուն, հին կրօնքը, հին քարքերը, հին օրէնքը, հին քարոյականը, հին միտքը, հին ըմբռնումները, հին նախապաշարումները, վերջապէս բոլոր հին աշխարհը (չարժէ՞ յիշել, «Ինտերնացիոնալի» տողերը «Այս հին

3. Տե՛ս Ա. Մակարեան, Երուանդ Օտեան, Եր., 1965, էջ 242:

4. Հայ նոր գրականութեան պատմութիւն, հ. 5, Եր. 1979, էջ 680:

աշխարհը կը փանդեմք մեմք մինչեւ հիմքերը եւ յետոյ Մեր նոր աշխարհը կը շինեմք մեմք . . .)։ դա հեշտ գործ չէ։ Պիտի կարողանա՞մ անել այդ ամէնը, չեմ կարծի։ Թերեւս յաջողուեմ միմիայն փանդել. այդ արդէն բաւարարութիւն կու տայ ինծի։ Իմ յաջորդը թող լծուի վերաշինութեան գործին։ Ես վայելում եմ փանդումի հեշտամբը, իմ յաջորդս թող կրի վերաշինութեան տաժամբը» (206-207)։

Ծանօթ պատմութիւն է։ Այսպիսի խելագար խանդով եւ «պօլշեիկեան տեմպով» խորհրդային առաջին տարիներին յայտնի է, թէ ովքեր էին յարձակում անցեալի ողջ մշակութային ժառանգութեան, դասական արուեստի, հին մտաւորականների եւ մասնագէտների վրայ, աւերում թանգարանները, նարտարապետական հրաշակերտները, պաշտամունքային յուշարձանները, գործարանները, անգամ երկաթուղիները՝ պատճառաբանելով, թէ հին է, անցեալի մնացուկ է. բուրժուական է։ Յամենայն դէպս դրանք դաշնակցականները չէին, եւ Ս. Մանուկեանը իրաւունք չունէր եզրակացնելու, թէ «Փանջունու այս տողերում տրուած է Հայաստանի դաշնակցական «կառավարողների» (դարձեալ չակերտներն իրենն են - Ս. Մ.) թողած ժառանգութեան դիպուկ բնութագիրը»(5)։

Որ եր. Օտեանը դաշնակցականներին ֆննդատելու հարցում եղել է անխնայ, նոյնիսկ որոշ իմաստով ծայրայեղ, դա կարելի է ապացուցանել եւ բացատրել, բայց ոչ այս եղանակով։ Այլ բան է, եթէ ուսումնասիրողը փորձեր մեկնաբանել դաշնակցական ընկերվարութեան օտեանական ֆննդատութիւնը։ Ցաւօք, ո՛չ Ա. Մակարեանը, ո՛չ Ս. Մանուկեանը, ո՛չ էլ Լ. Հախվերդեանը չեն փորձել

դաշնակցութեանը դիտել որպէս ընկերվարական կուսակցութիւն, որը նոյնիսկ երկրորդ ինտերնացիոնալի անդամ էր։ Այս դէպքում ստիպուած պիտի լինէին ֆննդատել ընկերվարութիւնը։

Զմոռանա՞մ, որ վէպն ունի «ընկերվարական ցամաքային» վերնագիր-բնորոշումը նաեւ։ Ուրեմն, Ընկեր Փանջունին, իբրեւ սոցիալիստ-ընկերվարական, ունի ընկերվարութիւն դաւանող կամ նրանով փետրաւորուող բոլոր ֆաղափական ուղղութիւններին բնորոշ յատկանիշներ։ Իսկ այս դէպքում, այսպէս մտածելով, չե՞մք հասնի մի այլ ծայրայեղութեան. օրինակ, չի՞ կարող ընկալուել, թէ Փանջունին խառնածին տիպար է, մի քիչ այս, մի քիչ այն ֆաղափական կուսակցութեան ներկայացուցիչներին բնորոշ յատկանիշների գումար՝ որոշ յարաբերակցութեամբ։ Եւ դա՞ չէ արդեօք պատճառը, որ խորհրդային ուսումնասիրողները նրան դաշնակցական են համարել, իսկ Սփիւռքի որոշ ուսումնասիրողներ՝ պօլշեիկ։ Այս կասկածը կը փարատուի, եթէ ընդունեմք, իսկ դա այդպէս է, որ Փանջունին ազնիւ նուիրեալ չէ, բարձր իտէալների համար պայքարող մարտիկ չէ, այլ յեղափոխական է դարձել պատահաբար, երբ վնդուած էր բոլոր ասպարէզներից եւ ուրիշ ոչինչ անել չէր կարող ու, ինչպէս Օտեանն է բնորոշել, «խօսելու դիրութիւն» ունենալու շնորհիւ։ Փանջունին օժտուած է այն ընդհանուր յատկանիշներով, որոնք բնորոշ են պատեհապաշտ կուսակցամուկներին, որոնց միակ արժանիքը կուսակցական, լինելն է, կուսակցական, որը ո՛չ կուսակցութեանն է ազնւօրէն ծառայում, ո՛չ ժողովրդին, առաւել եւս՝ երբ այդ կուսակցութիւնն ինքը ժողովրդին չի ծառայում։

Օտեանի գեղարուեստական ու հրապարակախօսական ժառանգութեան հանգամանակից ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ նա պարզապէս եղել է կուսակցամոլութեան թշնամին, չի հանդուրժել այն անձանց, ովքեր կուսակցականութիւնը դարձրել էին արհեստ, շահոյթի աղբիւր եւ վարում էին մակարոյծի կեանք: Սրանով հանդերձ՝ Օտեանը բացարձակ հեղինակութիւն էր նոյնիսկ իր հակառակորդների համար. միայն այս պարագայում էր հնարաւոր գրել դաշնակցական թերթում եւ ծաղրել դաշնակցական գործիչներին, գրել հնչակեան թերթում եւ ծաղրել հնչակեաններին: Այս իրողութիւնը չըմբռնելու պատճառով է, որ ումանք Օտեանին համարել են «անսկզբունք» «անլուրջ» ու «աննկարագիր» գրող, եւ աննպաստ այլ «գնահատականներ» շռայլել՝ նկատի ունենալով տարբեր ուղղութիւն ունեցող թերթերի թղթակցելը: Ուշադիր ընթերցողը կը նկատի, սակայն որ եթէ Օտեանը ՀՅԴ կուսակցութեան գործունէութեան կամ նրա որեւէ անդամի վարձագծի մէջ տեսել է գնահատելի բան, չի թաքցնել իր համակրանքը, թէեւ իրականում նա եղել է այդ կուսակցութեան ամենախիստ եւ հետեւողական քննադատը:

Յայտնի է, որ մի որոշ ժամանակ Օտեանը համակրել է հնչակեաններին, բայց դա քնաւ չի խանգարել, որ նա խստագոյնս քննադատի հնչակ պարագլուխների անխոհեմ արարքները: Դիմենք փաստերի:

Դաշնակցութեան ամենախիստ քննադատը Սիմոն Զաւարեանի մասին արտայայտուել է հիացմունքով, գնահատել «հայ մտաւորականութեան ամենէն սխրալի ու հոյակապ ներկայացուցիչներէն մէկի»

«պայծառ ու անապակ իտէալի, անշահախնդիր մարդու», «գաղափարի անխոնջ սերմնացանի» եւ «անմահ հայի» արժանիքները, մի դաշնակցական, որ իր կուսակցութեանն ու ժողովրդին ծառայում էր « առաքնալի մը հաւատով» եւ «մարտիրոսի մը անձնագոհութեամբ» (71): Եւ սրա կողքին՝ Օտեանի երբեմնի համակրելի հնչակեանները չեն խուսափել նրա «սարճագմային» քննադատութիւնից: Կարելի է յիշել Նազարբեկեանին ու նրա Մարօ տիկնոջը, Հմ. Արամեանցին եւ ուրիշ հնչակեանների ուղղուած օտեանական ծաղրի բնորոշ օրինակներ: Յատկանշական է, որ Օտեանը նրանց մէջ էր տեսնում իր իսկ կերտած Ընկեր Փանջունուն, Խեւ Աւօյին եւ միւսներին:

Կուսակցութիւնների նկատմամբ Օտեանի վերաբերմունքը ճշգրտելու խնդրում կարող է ուղեցոյց լինել «ժողովուրդը կը բողոքէ» գրոնիկը: 1913թ. պատգամաւորական ընտրութիւններին դաշնակցականների թոյլ տուած կեղծիքները նրանց վարկաբեկել էին հանրութեան առջեւ: Այս իրավիճակից փորձում էին օգուտ փաղել հնչակեանները: Բայց ահա հնչակեան ղեկավարները իրենց նպատակն իրագործում էին այն եղանակներով, ինչի համար դատապարտուում էին դաշնակցականները: Եւ նրանք գործում էին ճիշտ ու ճիշտ Փանջունու եւ նրա գործակից Խեւ Աւօյի նման: Ուշագրաւ այն է, որ Օտեանը իր կերտած գրական հերոսի կրկնութիւնն է տեսնում իրական մարդկանց վարձագծում ու գործելակերպում. «ճիշտ ինչ որ ընկեր Փանջունի պիտի ընէր Ծապլուարի մէջ, նոյնը փորձած է ընել ընկեր Զէյթունցեան Սամաթիոյ մէջ, անշուշտ իր շէյխին՝ Հմայեակ Արամեանցի խորհուրդովն ու ղեկավար-

րութեամբը»։ Բնական ու հասկանալի է ընտրապայքարը․ բայց ահա ստեղծուել է Ծապլուարեան բնորոշ իրադրութիւն, ուր Փանջունիութիւնը գործում է «ոչ կուսակցական հանգամանքով», ծպտուած ու ֆոդարկուած։ Հնչակ փանջունիները պէտք է գրաւէին Սամաթիոյ թաղական խորհուրդը՝ կազմուած դաշնակցականներին համակրող անձերից, պէտք է գրաւէին դպրոցը եւ իրենց հետաքրքրող միւս օղակները, բայց տեսէք թէ ինչպէս։

- «Իբրեւ հնչակեալ՝ պիտի գործենք - կը հարցնէ Խեւ Աւօ մը։

- Զէ, իբրեւ ժողովուրդ։

- Բայց հագիւ տասներկու հոգի կանգ եւ մէկերնիս ալ բնիկ սամաթիացի չենք։

- Տասներկու հոգին շատ է անգամ . . . չէ՞ք տեսած որ թատրոններու մէջ տասներկու հոգիով յանախ թէ՛ ժողովուրդ եւ թէ՛ բանակ կը ներկայացնեն։

Եւ դերերը կը բաժնուին։

- Դուք՝ չորս հոգի՝ ժողովուրդ կ'ըլլաք, երեք հոգի թող թաղին գիտակից երիտասարդութիւնը ներկայացնեն, երեք հոգի՝ բողոքող ծնողները, երկու հոգի ալ թաղին չէզոք տարրը»։

Կիրառուում են նաեւ դաշնակցական-ների գործադրած միւս միջոցները՝ թռուցիկ, հեռագիր, ցոյց, թերթերին, պատրիարքարանին ուղղուած դիմումներ, հնչակեան կենտրոնին ուղղուած հեռագրեր՝ Օտեանի իսկ բնորոշումով՝ «փանջունիական գրականութեան գլուխգործոցներ»։ Տասներկու դերասաններից կազմուած «ժողովուրդը», «գիտակից երիտասարդութիւնը», «բողոքող ծնողները» կազմում են

«հսկայ միթինկ», «աղմկում այնքան, որ ոստիկանները ձերբակալում են Զէյթունցեանին եւ դադարեցնում այդ գաւեշտախառն տրաման»։ Իսկ «ԸնկերՓանջունիին հաւասարիլ ուզող խեղճ Զէյթունցեանը բանտի դառնութեան բաժակը կը ֆամէ օրերէ ի վեր» (8)։

Ժողովրդի անունից սարքուած այս աղմուկ-աղաղակը, ժողովրդավարութեան կարգախօսներով վատ ֆոդարկուած արարքը, սակայն, գուտ անձնական նպատակ է հետապնդում։ Հնչակեան ղեկավարները պարզապէս ա՛յս եղանակով էին ուզում ստանալ իրենց շահաբաժինը վարձով տրուող մի սրնարանից եւ աշխատանքի տեղաւորել իրենց կուսակից մի ֆանի անգործ եւ ապիկար ուսուցիչների։

Ուրեմն այս դէպքում էլ իր էութիւնը լիովին բացայայտում է հնչակեան Փանջունին։ Կուսակցական պատկանելութիւնը կարեւոր չէ, երեւոյթն է էականը, փանջունիութիւնը, որ խորհրդանշէն է աչառու եւ շահախնդիր կուսակցամոլութեան։ Եւ լիովին հասկանալի է դառնում կուսակցական նեղմտութիւնից վեր կանգնած, ժողովրդի իրական շահերով ապրող ազնիւ գրողի ու ֆաղափացու մտահոգութիւնը․ «ո՛վ հնչակեաններ, փնտռել մի՛ տաք մեզի դաշնակցականները» (9)։

Փանջունիութեան, իբրեւ երեւոյթի, ընկալման եւ գնահատման խնդրում չենք կարող շրջանցել Յ. Օշականի կարծիքը։ Նա եւս յանձին Փանջունու տեսնում էր ոչ թէ այս կամ այն կուսակցութեան ներկայացուցչին, այլ գեղարուեստօրէն մարմնաւորուած է երեւոյթը իր ծագման

«. Տե՛ս Ե .Օտեան, երկերի ժողովածու, հ. ' , Եր., :»-ձ, էջ --:--:յ։

» . Տե՛ս Առյճ տեղը։

ու զարգացման ընթացքի մէջ, ճիշտ այնպէս, ինչպէս խաչագողութեան երեսոյթը մարմնաւորուած է Րաֆֆու հանրայայտ վէպում: Փանջունին էլ վաղուց ի վեր այնպիսի հասարակ անուն է, ինչպէս Քաւոր Պետրոսը, որովհետեւ նրա կերպարը հայ իրականութեան բոլոր ոլորտներում դրսեւորուում է իբրեւ բացարձակ հաւաստիութիւն: Դեռ անկին . . .

«Մինչեւ պատերազմ Փանջունին պատեցաւ բերնէքերան, ժողովրդական տիպարի շֆեղ իրականութեամբը, գերազանցելով նոյնիսկ Րաֆֆիի ստեղծած «Խաչագողը»՝ որ անցած էր ընթացիկ բարբառին եւ հասարակ անուն մը (nom commun) դարձած: (10):

Այո՛, Օտեանի գեղարուեստական գործող կանխատեսումն էր միայն ի վիճակի տեսնելու եւ դիտելու փանջունիութիւնը իր սաղմնաւորման ու զարգացման ընթացքի մէջ: Ամէն ինչ կիսատ-պոստ իւրացրած, միմեանց հակադիր տեսութիւններն անգամ իրար խառնող, իր անսահման «էգոիզմը» հանրային բարեկեցութեան կարգախօսներով ֆողարկող այդ հերոսը հասարակական ամենամեծ չարիքն էր, որի գործունէութեան հետեւանքը՝ կա՛մ բացարձակ այլասերումն է, կա՛մ բացարձակ կործանումը:

Փանջունիները որպէս կանոն, միջակութիւններ են, որեւէ լուրջ արարքի ընդունակ չեն, ոչ թէ ծառայում են գեղեցիկ գաղափարին, այլ գաղափարն են ծառայեցնում իրենց անձնական շահերին ու արկածախնդրական նկրտումներին: Նրանք հաւատաւոր չեն, բայց ջանում են հաւատացնել, կուրօրէն կատարում են հրամաններ ու հրահանգներ՝ առանց կշռադատելու հետեւանքները: Եւ դրանով

են նրանք վտանգաւոր: Ահա ինչո՞ւ Փանջունին, որպէս տիպ, միայն այս կամ այն կուսակցութիւնը չի ներկայացնում, միայն ազգային երեսոյթ չէ եւ միայն հայ չէ:

Օտեանն ինքն էլ այդպիսի համոզում է ունեցել: Կարող ենք յիշել նրա խօսքը. «Հարպագոն նոյնքան հայ է, որքան Ֆրանսիացի»: Փանջունին էլ նոյնքան ռուս, հրեայ, վրացի, գերմանացի, Ֆրանսիացի է, որքան հայ է: Օտեանի ռեալիզմի եւ նրա գրական վարպետութեան շնորհիւ է այդ կերպարը ձեռք բերել իրական եւ կենդանի մարդու համարում, տեղադրուել կոնկրետ դէպքերի եւ յարաբերութիւնների ոլորտը: Իսկապէս էլ, Փանջունու կերպարը ոչ թէ ճշմարտանման է, այլ ճշմարտացի է եւ ստուգութեան պէս հաւաստի: Ապացոյց՝ նաեւ մերօրեայ փանջունիները՝ հանրահաւաքներում, ընտրարշաւներում եւ այլուր: Ահա ինչո՞ւ են ժամանակակիցները Փանջունուն իրական կարծել եւ դիմել են Օտեանին՝ խնդրելով նրան պատմել «Ընկեր Փանջունիէն»:

Բ.

Օտեանի ստեղծագործութեան ուսումնասիրողներն ու գնահատողները դէպի առաջին մասը գերադասել են միւսներին: Այս հարցում նրանք թերեւս իրաւացի են: Երեւ մասերի միւսն էլ փաղուած է հայ կեանքից, դրանք իրական դէպքերի ու դէմքերի գեղարուեստական մարմնաւորումներ են, սակայն տարբեր են իրականութեանը համապատասխանելու աստիճանները, եւ դրանով է պայմանաւոր-

10. ՏԵՍ 8. Օշական, Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան, հ. 8 Անթիլիաս, 1980, էջ 391:

ուած իւրաքանչիւր մասի գեղարուեստական ուժը: Իբրեւ հաստատում կարող ենք վկայակոչել իր՝ Օտեանի խօսքը. «Քայց պէտք է ըսեմ, որ առաջին գիրքը աւելի յաջողած է քան երկրորդը: Ու բնական է, այդպէս պիտի ըլլար: «Առաքելութիւն մը ի Մապլվար»-ին տիպարները քաղած են անձամբ նանչցած մարդոցս դիմագծութեան, այսինքն՝ զանոնք ուսումնասիրած են քան տարի մը: «Ընկեր Փանջունի Վասպուրական»ը, ընդհակառակն, ինծի պատմուած տիպերն են, իմ լսածներս»(11):

«Փանջունու» երեք մասերը գրուել են հետեւեալ յաջորդականութեամբ. «Առաքելութիւն մը ի Մապլվար»՝ 1909թ. «Ընկեր Փանջունի Վասպուրականի մէջ»ը՝ 1914թ. «Ընկեր Փանջունի Տարագրութեան մէջ»ը՝ 1923թ.: Այս երեք մասերը գեղարուեստական մի մեծ ամբողջի քաղադրիչներն են եւ սերտօրէն կապուած են իբրեւ մէկը միւսի բնական շարունակութիւն: Վէպը բացառիկ ուժով արտացոլում է անցեալ դարավերջի եւ մեր դարակիզքի առաջին տասնամեակների՝ հայ ժողովրդի պատմութեան բախտորոշ իրադարձութիւններով հարուստ մի ժամանակաշրջան: Իրադարձութիւններ, որոնք հայութեան մէջ բոցավառում էին քաղաքական ու սոցիալական ճնշումից ազատագրելու յոյսեր ու վերածում ծանր յուսախաբութեան. իրադարձութիւններ, որոնք բերեցին ահաւոր ողբերգութիւն, հայութեան զգալի մասի քնաջնջում եւ տեղահանում, հայութեան պատմական հայրենիքի անդառնալի կորուստ: Այս երեւոյթների վաւերական պատկերները կան Օտեանի յուշագրութիւններում՝ իբրեւ ականատեսի վկայութիւններ: Սակայն քննարկուող վէպում դրանք ներկայացուած են երգիծաբանի գրչով: Այստեղ էլ, ինչպէս Ե. Զարեանի «Երկիր Նաիրի» վէպում, առկայ

է ողբերգական թեմայի եւ նրա մարմնաւորման երգիծական եղանակի հակասութիւնը: Երգիծաբանը առանձնայատուկ ձիրքով օժտուած արուեստագէտ է եւ միւս արուեստակիցներից տարբերում է ուրոյն աշխարհընկալումով, պատկերաւոր մտածողութեան իւրօրինակ համակարգով: Մոայլ անցեալին, ողբերգական ներկային նա նայում է ծիծաղով ու հեգնանով՝ մեծ նիգով զսպելով դառնադի արցունքները: Աւելի յաճախ միախառնում են ծիծաղն ու արցունքը՝ դառնալով երգիծականի եւ ողբերգականի ինքնատիպ արտայայտութիւն: Օտեանի, որպէս երգիծաբանի, մարդկային էութիւնն ու գրողական խառնուածքը նիշտ ըմբռնելու հարցում ուղեցոյց կարող է լինել նրա մտերիմ ընկերոջ՝ Լեւոն Բաշալեանի մի կարեւոր բնորոշումը. «Երուանդ Օտեանի մէջ գտնուող մարդն ալ արտասովոր տիպար մը կը ներկայացնէր: Մեր յաւիտենապէս տրտնջացող, լացող, քզկացող, գանգատող, ամէն բանի մէջ դիմացինը յանցաւոր բռնող մեր ցեղին մէջ ի՛նչ հպարտ բացառութիւն մը կը կազմէր ինք, որ ամէն ցաւի ու ամէն աղէտի վրայ կը պտտցնէր իր ստոյիկեանի անայլալ աչքերը . . . Թերեւս ինք անոնցմէ էր, որ միշտ կը խնդան՝ իրենց արցունքը զսպելու համար, բայց ատիկա ոչ ոք գիտցաւ, ոչ իսկ իր մտերիմները: Ու ամէնուն վրայ եւ ամէն տեղ ժպտեցաւ իր խնդուքը, քիչ մը արհամարհոտ, այնքան չար, որչափ պէտք էր միայն . . .»(12)

Լ. Բաշալեանի այս նկատողութիւնը թերեւս օգնի առհասարակ Օտեանի ստեղծագործութեան մէջ եւ մասնաւորապէս «Ընկեր Փանջունի» վէպի պատկերներում երգիծականի եւ ողբերգականի յարաբերակցութիւնը պարզելուն:

ՍԱՄՈՒԷԼ Պ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

11. "Բագին" 1969, նո. 11-12, էջ 145:

12. Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, Փարիզ, 1928, էջ 455-456: